անկարելի լեալ է ընդունել զպատասխան նորին, որպէս պատմեցին Հայք յառաջագոյն. 'ի ժամանակին յայնմիկ ո՞րպէս եղեւ վէճն և ամբաստանութիւնն, և յի՞նչ միտս գրեցաւ մատուցեալ Իլամն. եթէ ունիք զպատճէն նորին՝ մատուցէք, ապա թէ ոչ, ակնարկեսցի յարձանագրութիւն դատարանի և գրեսցի աստ։

Փոխանորդն Ցունաց, ունիմք զպատճէն նորին վաւերեալ կնքով Դատաւորին, և յընթերցանէ նորին իմանի հանգամանք դատին. եւ երկրորդ օրինակն վաւերեալ 'ի թուին ՌՀՈ 'ի ետհեայ Թէվֆիզ Էֆէնտի Դատաւորէն Երուսաղէմի։

Քաղաքապետն, ծանուցաւ իմաստ Իլամին և ամբաստանութիւն Ցունաց, և 'ի քննութենէ յայտնի երեւեցաւ թէ յեկեղեցին Բեթղեհէմի կանթեղք եւ պատկերք կախեալ են 'ի ձեռն Օմար Նասիպ Էֆէնտեայ 'ի թուին ՌՀՈՀ։ Որովհետեւ ոչ են նշանակեալ թիւք եւ քանակութիւնք նոցին, եթէ արժան իցէ մատուցէ աստ Փոխանորդն Ցունաց զցուցակս նոցին, զորոց ինքն ամբաստան լինի։ Փոխանորդն Ցունաց, եթէ հաճոյ թուի ձեզ՝ ամենեքեան երթիցուք 'ի Բեթղեհէմ և անդ առաջի երկուց ազգաց և պաշտօնէից քննեսցուք և ստուգեսցուք զամենայն ինչ, յայնժամ չինայ ունիք ասել ինչ, հաճոյ թուեցաւ պաշտօնէից և Հայոց։

Ի թուին ՌՀՀԷ գնացին 'ի Բեթղեհէմ Պաշտօնեայք քննութեան, ընդ որս Հայք և Յոյնք, և հաճութեամբ ամենեցուն սկիզբն արարին քննութեան և արձանագրեցին, որք են.

Ի մէջ Այրին և 'ի վերայ Ծննդեան տեղւոյն պատրաստ գտեալ իրքն.

Կանթեղ։	Պատկեր։	
4	—	Լատինաց։
6	3	Ցունաց։
4	—	Հայոց 'ի թուին ՌՀՀՈ։
2	3	Դարձեալ Հայոց կախեալ 'ի թուին ՌՀՈՀ։

Ի շրջապատս Այրին պատրաստ գտեալքն.

Պատկեր։

1 Լատինաց։